**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 58-Ն
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19)-րդ կետով, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի նախադպրոցական կրթության հաստատություններ հաճախող երեխաների պահպանման համար ծնողական /նրանց օրինական ներկայացուցիչների/ ամսական վճարի դրույքաչափը սահմանել *4000 դրամ:*

2. Արտադպրոցական դաստիարակության երաժշտական հաստատություններում սովորողների ամսական ուսման վճարը սահմանել ըստ բաժինների՝

1) դաշնամուրային *2500 դրամ*
2) լարային գործիքների /բացառությամբ թավջութակ և ալտ/ *2000 դրամ*
3) փողային և հարվածային գործիքների /բացառությամբ շեփոր/ *1600 դրամ*
4) երգեցողության *1600 դրամ*
5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր *անվճար*

3. Պարարվեստի, թատերական արվեստի բաժիններում *1600 դրամ*

4. Կերպարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի բաժիններում *1600 դրամ*

5. Երկրորդ գործիք, երգեցողություն ուսուցանելու դեպքում սահմանել լրացուցիչ ուսման վարձավճար *500 դրամ*

6. Առավել շնորհալի և երաժշտական կրթությունը շարունակելուն հակված շրջանավարտների համար սահմանել վարձավճար ըստ բաժինների՝

1) դաշնամուրային *3000 դրամ*
2) լարային գործիքներ /բացառությամբ թավջութակ և ալտ/ *2500 դրամ*
3) փողային և հարվածային գործիքներ /բացառությամբ շեփոր/ *2000 դրամ*
4) երգեցողություն *2000 դրամ*
5) ժողովրդական գործիքներ, թավջութակ, ալտ և շեփոր *անվճար*

7. Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի և մշակույթի կենտրոնի խմբերում ընդգրկված սաների համար ամսական վճար սահմանել՝ *500 դրամ*

7.1 Իրազեկ դպրոցական խմբերում ընդգրկված սաների համար՝ *անվճար*

8. Մարզադպրոցներում սաների ամսական ուսման վճար սահմանել *500 դրամ*

9. Թեթև աթլետիկայի մարզաձևեր *անվճար*

10. Հայտարարված համաճարակային, բնակլիմայական և այլ պատճառներով ուսումնական պարապմունքները դադարեցնելու ընթացքում վճար չի գանձվում:

11. Համայնքային ենթակայության նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների վճարների դրույքաչափերի նկատմամբ սահմանել 100 % զեղչ՝ բնակչության առանձին խմբերի համար՝

ա. զոհված և վիրավոր ազատամարտիկների երեխաներ

բ. երկկողմ ծնողազուրկ երեխաներ

գ. Հաշմանդամ երեխաներ

դ. Չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքի երեխաներ

12. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1) ընդունել անհատական որոշումներ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպություններ հաճախող անապահով ընտանիքների երեխաների համար վճարի դրույքաչափի 50 %-ի չափով զեղչ սահմանելու մասին:

2) արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից բնակչությանը վճարովի ծառայություններ մատուցելու դեպքում՝ հաստատել դրանց ցանկը, վճարների չափը և կարգը:

13. Վճարների գանձման ժամկետ սահմանել մինչև վճարման ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 15-ը ներառյալ:

14. Ուժը կորցրած ճանաչել Կապան քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Կապան քաղաքային համայնքի համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 138-Ն որոշումը:

**Կողմ ( 10 )՝**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ.* *նոյեմբերի* *07*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 59-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահի արդյունքներով, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Գայանե Մանուկի Հարությունյանին Կապան քաղաքի թիվ 2 երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐՋՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ _նոյեմբերի_ _07_*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա
**07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.**

## ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԿՈՒՄԲԱԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Արմեն Վարդանի Գևորգյանին Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ. նոյեմբերի 07*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 61-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

### ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15)-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Ջանիկ Հրանտիկի Գրիգորյանին Կապան քաղաքի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու մասին:

**Կողմ ( 10 )՝**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐՋՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ* *նոյեմբերի* *07*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 62-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

1. Ներել համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ տարածքի վարձակալության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի՝ վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման առանձին պայմանագրերով /համաձայն հավելվածի/ նախատեսված պարտավորությունները 1093073 /մեկ միլիոն իննսունյերեք հազար յոթանասուներեք/ ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՄԻՐՋՈՅԱՆ ՄՀԵՐ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ. նոյեմբերի 07*

*ք. Կապան*

*Հավելված*
*Կապան համայնքի ավագանու*
*<< 07 >> նոյեմբերի 2016թ.*
*թիվ 62-Ա որոշման*

| Հ/Հ | Պայմանագրի | | | Պարտքը 20.02.2016թ. դրությամբ /ՀՀ դրամ/ | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| | տեսակը | կողմը | կնքման օրը | մայր գումար | հաշվարկված տույժ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Տարածքի վարձակալություն | <<Հանգրվան>> բարեգործական ՀԿ | 21.12.2011թ. | 381,421 | 0 | պայմանագիրը լուծվել է |
| 2 | Հողի վարձակալություն | Համբարձումյան Անդրանիկ | 14.12.2004թ. | 308,908 | 143,364 | պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է |
| 3 | Կառուցապատման իրավունքի տրամադրման | Սարգսյան Ռոմիկ | 07.11.2009թ. | 0 | 200,883 | պայմանագրի գործողության ժամկետը ավարտվել է |
| 4 | Կառուցապատման իրավունքի տրամադրման | Հայրապետյան Միհրան | 24.12.2007թ. | 58,032 | 465 | պայմանագիրը լուծվել է |
| Ընդամենը | | | | 748361 | 344712 | |
| **Ընդհանուրը** | | | | **1 093 073** | | |

***Աշխատակազմի քարտուղար՝*** ***Ն. Շահնազարյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ՝ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 12/32 ՀԱՍՑԵԻ ԵՎ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ 4/6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ/ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20)-րդ կետով, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին կետով, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 23.06.2016թ. և 26.10.2016թ. հաշվետվությունները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Համայնքային սեփականություն համարվող, Կապան քաղաքի Հ. Ավետիսյան փողոցի թիվ 12 շենքի 32 բնակարանը անհատույց /նվիրատվության կարգով/ օտարել այն զբաղեցնող և փաստացի տիրապետող Սոս Սպարտակի Հարությունյանին:

2. Համայնքային սեփականություն համարվող, Կապան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 4 շենքի 6 բնակարանը անհատույց /նվիրատվության կարգով/ օտարել այն զբաղեցնող և փաստացի տիրապետող Սվետլանա Բարթելի Խաչատրյանին:

3. Առաջարկել նվիրառուներին՝ ապահովել սեփականության իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ գործառույթների և դրանց հետ կապված ծախսերի կատարումը:

4. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ. նոյեմբերի 07*
*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 64-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.
## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 6/82/2/1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 43,3 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի 6/82/2/1/1 հասցեում գտնվող 43,3 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22082016-09-0014/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 562900,0 /հինգ հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր/ դրամ:
2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ  նոյեմբերի  07*
*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 65-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.
## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 6/82/2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 30,2 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի 6/82/2/2 հասցեում գտնվող 30,2 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02082016-09-0030/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 425820,0 /չորս հարյուր քսանհինգ հազար ութ հարյուր քսան/ դրամ:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ _նոյեմբերի_ _07_*
*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 66-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 6/82/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 25,9 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին  ո ր ո շ ու մ  է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի 6/82/3 հասցեում գտնվող 25,9 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 04082016-09-0021/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 236700,0 /երկու հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր/ դրամ:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ  նոյեմբերի  07*

*ք. Կապան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
### ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
### ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 67-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.
## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8/60 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 14,05 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Մ. Հարությունյան փողոցի 8/60 հասցեում գտնվող 14,05 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 23052016-09-0004/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 200000,0 /երկու հարյուր հազար/ դրամ:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ (10)՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ — ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ — ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ — ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ — ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ — ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ _նոյեմբերի_ _07_*

*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 68-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.
## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 7,6 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Ա. Մանուկյան փողոցի 3/39 հասցեում գտնվող 7,6 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08092016-09-0013/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 90000,0 /իննսուն հազար/ դրամ:
2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐՋՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ նոյեմբերի 07*
*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 69-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.
## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ Մ. ՊԱՊՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/73 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 1,8 ՔԱՌ.Մ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20)-րդ կետով, համաձայն Կապան քաղաքային համայնքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 29-ի «Համայնքային սեփականություն համարվող գույքը /ոչ բնակելի տարածքները և շինությունները/ ուղղակի վաճառքով և հրապարակային սակարկություններով օտարելու դեպքում օտարման գին սահմանելու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 103-Ն որոշման, հաշվի առնելով անշարժ գույքի գնահատման 27.10.2016 թ. հաշվետվությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _9_ կողմ, _1_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին   ո ր ո շ ու մ  է.***

1.Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի 1/73 հասցեում գտնվող 1,8 քառ.մ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08092016-09-0014/ օտարել հրապարակային սակարկություններով, մեկնարկային գին սահմանելով 27000,0 /քսանյոթ հազար/ դրամ:

2.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 9 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ
ՍԱՀԱԿՅԱՆ ՐԹՈՒՐ

**Դեմ ( 1 )**

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ _նոյեմբերի_ _07_*
*ք. Կապան*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 70-Ա
# 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՎԱՐՏ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ 0.02 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ «ԿԱՊԻ» ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի և 8-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ին N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշման համաձայն ստեղծված պետական միջգերատեսչական հանձնաժողովի 04.08.2016թ. N 58 դրական եզրակացության և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Կապան քաղաքային համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և Կավարտ թաղամասում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողերից 0.02 հա հողամասը (ծածկագիր 09-001-271-002) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ, ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության «կապի» գործառնական նշանակության:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ. նոյեմբերի 07*

*ք. Կապան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 71-Ա
07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՄԱՎՈՆ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ-Ը ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՊԱՆԻ ԱԿՈՒՄԲԱԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀՈԱԿ-ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ, ԿԱՊԱՆԻ ԱԿՈՒՄԲԱԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 64-րդ հոդվածի 2-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 24-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության _10_ կողմ, _0_ դեմ, _0_ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպման եղանակով միացնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի ակումբագրադարանային միավորում համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն հավելված 2-ի:

4. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներն օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում նշված վերակազմակերպումը սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրանցման պահից:

6. Սույն որոշման 3-րդ կետի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Կապան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 7-ի «Կապան քաղաքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 57-Ա որոշման 1-ին կետի N 27 և N 28 հավելվածները:

**Կողմ ( 10 )՝**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ* *նոյեմբերի* *07*

*ք. Կապան*

*Հավելված N 2*
*Կապան համայնքի ավագանու*
*2016թ. նոյեմբերի 7-ի թիվ 71-Ա որոշման*

***<<Ակումբագրադարանային միավորում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը***

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Միավորը | Դրույքաչափը | Աշխատավարձի ֆոնդ |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 120000 | 120000 |
| 2 | Գործավար | 1 | 78100 | 78100 |
| 3 | Մեթոդիստ | 1 | 80000 | 80000 |
| 4 | Ծրագրավորող | 1 | 80000 | 80000 |
| 5 | Պատկերասրահի վարիչ | 1 | 78100 | 78100 |
| 6 | Պատկերասրահի ցուցահանդեսների կազմակերպիչ | 1 | 72800 | 72800 |
| 7 | Գրադարանային գործի գլխավոր մասնագետ | 1 | 88000 | 88000 |
| 8 | Գրադարանային գործի մասնագետ | 2 | 72820 | 145640 |
| 9 | **Ակումբավար՝** | **9** | | **676500** |
| 9,1 | Ակումբավար | 5 | 72820 | 364100 |
| 9,2 | Ակումբավար | 4 | 78100 | 312400 |
| 10 | **Միջոցառումների կազմակերպիչ՝** | **4** | | **307120** |
| 10,1 | Միջոցառումների կազմակերպիչ | 1 | 72820 | 72820 |
| 10,2 | Միջոցառումների կազմակերպիչ | 3 | 78100 | 234300 |
| 11 | Գրադարանի վարիչ | 1 | 72820 | 72820 |
| 12 | **Ավագ գրադարանավար՝** | **6** | | **442200** |
| 12,1 | Ավագ գրադարանավար | 5 | 72820 | 364100 |
| 12,2 | Ավագ գրադարանավար | 1 | 78100 | 78100 |
| 13 | **Գրադարանավար՝** | **17** | | **1264340** |
| 13,1 | Գրադարանավար | 12 | 72820 | 873840 |
| 13,2 | Գրադարանավար | 5 | 78100 | 390500 |
| 14 | Հավաքարար | 2 | 78100 | 156200 |
| ***Ընդամենը*** | | ***48*** | | ***3661820*** |

***Աշխատակազմի քարտուղար*** ***Նելլի Շահնազարյան***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ N 72-Ա
## 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թ.

## ԴԱՎԻԹ ԱՐՄԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 822 որոշման և հաշվի առնելով համայնքի ավագանու առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության <u>10</u> կողմ, <u>0</u> դեմ, <u>0</u> ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Գույքահարկի գծով արտոնություն և Կապան քաղաքի Ձորք թաղամաս 11/29 հասցեի բնակիչ Դավիթ Արմենի Մարտիրոսյանին /սոցիալական քարտ N 1202900364/ տրամադրել գույքահարկի արտոնություն և ազատել Կապան համայնքում հաշվառված Օպել Մոնտերեյ մակնիշի 13 UL 166 պետհամարանիշի ավտոմեքենայի համար 07.11.2016թ. դրությամբ հաշվարկված գույքահարկից՝ 348 528 /երեք հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր քսանութ/ դրամ գումարի չափով:
2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

| | |
|---|---|
| ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԼԱԴԻԿ | ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱ | ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ | ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՀԵ |
| ՄԻՐԶՈՅԱՆ ՄՀԵՐ | ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ |

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*2016 թ <u>նոյեմբերի</u> <u>07</u>*
*ք. Կապան*